Խոտակերաց կամ Բարկովի վանքի հետ, վոր գտնվում է Վայոց ձորում, վոչ հեռու ներկա Խաչիկ, և հին Ա-բաստամուխ գյուղից, սկզբում Սյունյաց իշխանների, իսկ ԺԳ. դարում Որբելյանների սեպհականություն. ըստ պատմիչ Որբելյանի այդտեղ եր դրված «ահարկու և աստուածահրաշ ս. Նշանն, որ խոտակերաց կոչի»։ Բայց ինչպես և յերբ եր անցել սրբությունը Պռոշյանների ձեռքը, չգիտենք. պահարանի հետևում, Եայի արձանագրության համեմատ, նա Պռոշյանների հայրենական ժառանգությունն եր, «որով և նախնիքն իմ զօրացան», հավանորեն Վասակ Խաղբակյանի ժամանակ ձեռք բերված. արդյոք Որբելյաններից խլած խաչերից մեկը (նկ 78), ասել չենք կարող։ Այդ խաչը պահվում եր, հավանորեն, Ոծոփի վանքում. Վարդանի Աշխարհացույցի մեջ Այրից վանքի կամ Պռոշյանների մյուս սրբությունների հետ՝ «ս. գեղարքն աստուածամուխ, ներկեալ արեամբ կենարարին և տախտակն ս. տապանին», չե հիշված Խոտակերաց ս. Նշանը *։ Բայց նույնանուն մի խաչ գտնվում եր Ոծոպի վանքում, վորի մասին յիշատակություն ունինք արդեն քանիցս հիշված նույն վանքի Շմավոն գրչի 1292 թվին գրած հիշատակարանի մեջ. «գրեցաւ տառս աստուածային ի գաւառս Շահապունեաց, ի միաստանիս որ և մերձ յամենաւրհնեալ և յաստուածապահ գեաւղս Ոծոպի կոչեցեալ, ընդ հովանեաւ սոսկալի և սքանչելագործ նշանացս, Խոտակերաց և Խիկարաց» **։ Այս խաչը պիտի լինի Եայիի ձեռքով նորոգված և գեղարվեստական պահարանի մեջ դրված։ Խոտակերաց Ս. Նշանի մասին ապա հիշատակություն ունինք նույն վանքում ԺԷ. դարու առաջին քառորդին, միայն այդ խաչը տարբեր և մեր պահարանի խաչից. բայց այդ մասին հետո, պատմության մեջ։

պատկեր 83.
Եայի Պռոշյանի անդրին.

Պահարանը քառանկյունի յե կամ «աղիւսաձև», ինչպես անվանում է Որբելյանը նման պահարանները, արծաթից և վոսկեջրած, 42×26 սմ. մեծությամբ։ Հետևի յերեսում արձանագրությունն է, գեղեցիկ, յելընդավոր գրերով (պատկ. 79), վորից տեղեկանում ենք, թե «Եայի որդի Հասանա որդո Պռոշա որդո մեծին Վասակա յազգէ Հաղբականց» կազմել է տվել այս պահարանը վորպես անջինջ հիշատակ և խնդրում է հիշել յուր ծնողներին՝ Ամիր-Հասանին և Թաճերին և յուր հորեղբորը Պապաքին յուր նախնյաց և ազգատոհմի հետ։ Իսկ առաջին յերեսի յերկտող արձանագրությունից իմանում ենք, վոր պահարանը շինված է ՉԽԹ=1300 թվին, վորի առիթն ել բացատրեցինք վերև։

Առաջին յերեսին (պատկ. 81), ճակատի կեդրոնում, չորեքկերպյան աթոռի վերա բազմած է Հիսուս, աջից մարդ և արծիվ, իսկ ձախից առյուծ և յեզ. յերևում են միայն չորեքկերպյանների գլուխները բոլորակ նիմբուսներով։ Չորեքկերպյանների այն դասավորությունը, վոր ունինք այստեղ, համապատասխան է Հովհաննու Հայտնության Դ. գլ. տեսլյան. բայց հայ արվեստի մեջ ավելի ընդհանրացած եր մի ուրիշ դասավորություն, համապատասխան Յեզեկիելի Ա. գլխի տեսլյան։ Յիշենք Նորավանքի (Ամաղու) բուրթելաշեն Աստվածածնի ավսիդի նույն մոտիվը, վոր ժամանակակից է մեր պահարանին, դասավորված է Յեզեկիելի համեմատ, յերկու կողմից կանգնած հրեշտակներով, ձեռքերը մեկնած դեպի Ամենակալը։ Մեր քանդակի մեջ մի տարբերություն ևս կա, վոր չորեքկերպյաններից ել հրեշտակը խսկական մարդ է, մորուքով և վոչ կուսական կերպարանքով, այսինքն բառացի հետևողություն և բնագրին։ Հիսուսի նիմբուսը բոլորակ է, գոգավոր և խաչազարդ. նա նայում է դիտողին en face, ունի բոլորակ և թավ մորուք, դեմքի արևելյան արտահայտությամբ, աջով խաչակնքում է հունա-հայկական ձևով, իսկ ձախով բռնել է ծնկան վերա հենած ավետարան, «ես եմ լոյս աշխարհի» բառերի խորաքանդակով։ Հիսուսի գլխի յերկու կողմից յելնդավոր գրերով գրված է «Յս Քս»։ Հագել և մինչև վոտները հասնող յերկար պարեգոտ, բազուկների մոտ սեղմված թեերով, վոր արևելյան է, և վերայից ձգել սիրուն ծալքերով վերնազգեստ։ Այս ամբողջն առնված է գարնեղավոր, կրկնաշերտ և անկյուններում սրածայր՝ շրջանակի մեջ։ Յերկու կողմից, պահարանների վերին անկյուններում, թևավոր և ամբողջ հասակով մի մի հրեշտակ թեքված են դեպի Ամենակալը (παντοκράτορ). յերկու ձեռքով խաչագլուխ յերկար գավազան բռնած։ Հրեշտակների ֆիգուրները քիչ յերկար են, անհամաչափ ամբողջության, մի յերևույթ, վոր հետին բյուզանդականության ազդեցությունն է ցույց տալիս, բայց վոչ չափազանցությամբ։ Հրեշտակների լուսո պսակը յեղերված է պարանաձև զարդով. յերկար և վոլորուն խոպոպիքները իջնում են ուսերի վրա, իսկ ականջների մոտ ծածանվում են լսողության զույգ ժապավենները. նրանց լուսո պսակի մակերևույթը ծածկված է արմավենիկի զարդով։ Յերեք քառորդական յերեսով դարձած են դեպի դիտողը։ Նրանք հագել են մինչև վոտները հասնող ներքնազգեստ, քղանցքները, բազպանները և փողպատը զարդարուն։ Ներքնազգեստի վերայից ունին ավելի կարճ, կողքերից ատիճանաբար իջնող կարվածքներով և ծալքերով վերնազգեստ. վոտքերին նույնը կոշիկներ, առանց կրունկների։ Ամբողջ խմբանկարը թողնում է գեղարվեստական, հաճելի տպավորություն։

Առաջին յերեսի միջին տեսարանը արտաքուստ, դռների և նրանց կողքերին յեղած պատկերներն են,

* Հ. Թորոսյան. Ցույց. Ձեռ. Խաչիկ վ-ի. Ա. 77։
** Արարատ՝ 1876. 413.